

Մարիունի ժամագիրքը, Օշինին պէս
Կիլիկիա օրինակուած, շատ ժուժկալ է,
եւ լոռութեամբ անցած նոյն իսկ Շնորհա-
լիի երգերու, շարականներու, մեծ ա-
ղօթքներու եւ զանազան սաղմոսամասե-
րու վրայէն, որոնք գիտենք թէ կիրար-
կութեան մէջ էին ամէնուրեք: Որով իր
լոռութիւնը Օշինի յաւելուածներու նը-
կատմամբ՝ կրնայ եւ հերքումն չնշանակել
գէթ բոլորին: Ամէնուն մէջ կան թերու-
թիւններ նաեւ ուտիքի եւ աղուհացի մա-
սերու զանազանութեան, որ արդիւնք է

կարճարանութեան կիրարկողին եւ յղել
մը սովորութեան:

Վերջապէս Կիլիկիա, Երուսաղէմ, 1375ի
ընդօրինակութեան դաւառն (անծանօթ),
եւ ուրիշներ՝ որ հեռի են մեր տեսութե-
նէն, կը վկայեն թէ մեր ժամակարգու-
թիւնը այս շրջանին մեծ յեղաշրջութենէ
մը կ'անցնի: Խաչակիրներու ժամանակի
մէջ կ'ապրին հայ ազգն ու եկեղեցին, եւ
անոնց ազդեցութեան պիտի ենթարկուին,
եւ ծիսական փոփոխութիւններու:

(Շարունակելի)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

ՎԵՆԵՏԿԵԱՆ ԵՐԱԶԱՆՔ

Երկինքը երբ սիրտս ողողէ կապոյտով,
Կամ թէ լուսնի դեղձան փունջով մշտավառ,
Էութիւնս ալ կարօտանքէ հոգեխռով՝
Աստղ կ'ըլլայ, որ լոյսդ ըմպէ անդադար...

Ծովը երբոր դիւ կը գգուէ հեշտօրէն
Ալիքներու դալարումով նազելի,
Էութիւնս ալ կարօտանքի ալրումէն՝
Նաւակ կ'ըլլայ որ ափերուդ քաղցր հասնի...

Հովիկն ալ երբ ելեւէջով անասաց
Եղանակներն իր բիւր սուլէ քաղցրալուր,
Էութիւնս ալ կարօտանքէ հրկիզուած՝
Երգ կը դառնայ, որ սիրտդ յուզէ, իբր համբոյր...

Այսպէս յուշերն ապրումներու տարաժամ
Պալատներու պէս Վենետիկեան փրփրածին,
Կեանքիս գետին մէջ ցոլալով ոսկեծամ,
Մուսայիս թռիչք մ'անմահ կու տան քընարին...

Զակիմքոս կղզի (Յունաստան)

24 Օգոստոս, 1961

ՅԱԿՈԲ ՃԵԼԱԼԵԱՆ

ՅԱԿՈԲ ՃԵԼԱԼԵԱՆ

Ներքո՛ւ՝ Ս. Մեսրոպի

Մոռացումի Անյայտացման տեղատարափ մըն էր գորշ,
ու կը հեծէր Հայքին վերեւ մեր Ապագան անորոշ...:

* * *

Բայց ո՞վ ես դու, որոտաթունդ խօլ գուպարին մէջ մենակ,
ինչո՞ւ բախիլ կը խիղախես կայծակներուն, որ ահա՛
ինձ պատմութեանդ ցոյց կու տան փրչապատառ ու փոշոտ
եւ ներբաններդ արիւնած՝ Որոնումի ուղիէն.
չունչդ հեւքոտ է, եւ բազուկներդ՝ թախանձագին վերամբարձ,
հոգիդ՝ սուղուած Անհունին մէջ, մինչ կ'որոճաս աղօթիկեր...
«Հա՛յր, տո՛ւր որ Գողթն յաւերժ երկնի գուսաններու խնդ երգով
նորաստեղծէ արեգակներն Վահագնի բոց աչքերուն,
միշտ սուրայ սեւեն Արտաշէսի, կըռուի, սիրոյ՝ յաղթական,
փող ու թմբուկ զըւարթ զարնեն, ոսկի տեղայ ու մարգրիտ,
չարն Արտաւազդ արդար պարծի, անդունդներուն մէջ մաշի,
ծուխ ծխանին մշտանորոգ Նաւասարդներն ողջունէ...»:
Եւ բընութիւնն երկա՛ր լոեց մինչեւ եկաւ Փայլածուն.
հրեշտակն Անոր, եւ հպումով մ'իր թեւերուն հրաշագործ
զոյգ մ'ալ թեւ քեզ տըւաւ, դարձուց իրեն նրման լուսաճեմ...:
Ա՛լ կանդ չափի, ու թեւաբախ բարձունքն ելար ամպերուն,
կռունկի փետուր մը խըլելու՝ փոխան գրչի... եւ իսկոյն
դուն բարձրացար՝ որ Սեւանայ թանաքին մէջ գայն մըխես,
ու մեր ցեղի յաղթերդ պերճ, պատգամատու, Մասիսի
կրանիդ լանջքին վըրայ յաւերժ քանդակեցիր հըրակերտ...:
Տեղատարափն ա՛լ դադրեցաւ. դու յարատեւ ծիածան
ըլլայ հեղող մանկան, ըլլայ սաղմոսասաց ծերուկին,
գրքերուն վրայ կ'յաճիս, գոհարն ա՛լ ձօնելով տառերուդ...
Մեղեսիկ սուրբ, մանիչագոյն՝ խորանի պէս խնկածոր,
Աղամանդ ջինջ՝ մեր հայատենչ իղձերուն պէս անապակ,
Շափիւղայ բիլ՝ մեր լիճերուն պէս - հայելին երկընքին -
Թանկ ու զմրուխտ կանաչ՝ յոյսի մեր մարդերու պէս անվերջ,
Ոսկի՝ ցեղի Սրտին նրման, ու կարկեսան՝ արեան գէտ,
Տօղ մ'ալ արցունք աչքերէդ, հի՛ն մեր ցաւերուն ըսփոփանք...:

* * *

Կեանքի նըժարն ալ կըքեցինք... աստղատարափ մը հիմա
Կ'երգէ Հայքի Անմահութեան հրուանդանին իսկ վրայ:

Աքէնֆ 24/1/1962

ՅԱԿՈԲ ՃԵԼԱԼԵԱՆ